



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



L6n

2255



1999

43903 - U. R.

215r - *Styfnútíuadi Mýssene*

22 7 31

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԱԶԱՏՈՒԹԵԱՆՆ

ՀԱՃԸՆՈՅ

Ի ԶԵՌԱՅ ՔՕԶԱՆԵԱՆՅ



Handwritten mark on the left margin.



Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՍՏԱՆԵ

1871



280 40 - 62 9

43903-U. R.





RECEIVED  
THE DIRECTOR GENERAL  
APR 10 11 13

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ  
ՉԱԳՄԱԳՉՃՂԱՐ ՓՈՂՈՑ ԱԿՈՐԵԱՆ ԽԱՆ  
ԹԻՒ 10, 11, 12, 13.

3A 2958

2255-60

Առջև կենում չի վառերացեալ օրինակներն՝  
իբր հակասիւյ պիտի նկատուի.





ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԱԶԱՏՈՒԹԵԱՆՆ

ՀԱՃԸՆՈՅ

Ի ԶԵՌԱՅ ՔՕԶԱՆԵԱՆՅ



Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ


—  
1871



## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

### ԱԶԱՏՈՒԹԵԱՆՆ ՀԱՃԸՆՈՅ

#### Ի ՉԵՌԱՅ ՔՕՉԱՆԵԱՆՑ (\*)



1865 ին, ՅուՆիս ամսոյս մէջ Օսմանեան մեծազօր տէրութիւնը սկսաւ բանակներ ուղարկել Քօզանեանց վրայ, որոց սպարապետն էր Տէվրիշ Բաշայ, և որոյ կ'առաջնորդէր Մկրտիչ աղայ Պայրամեան, Հաճընցի: Սոյն Բաշայն նախ կեռաւ Տալէ

---

(\*) Քօզանեանք՝ Թուրք ազգաւ եւ Մահմետական կրօնիւ, մեծ ընտանիք մ'էին. որք Հաճընոյ Հայ անկախ իշխանաց յաջորդելով՝ կը կառավարէին զՀաճըն. իրենց ձեռքն էին նսեւ Սիս, Վահկայ, Պէլէն, Մաղսուս, Ռուճու. են. ևն: Սոյն իշխանք անկախ էին Օսմանեան պետութենէն, եւ երբեմն միայն թեթեւ հարկ մը կը վճարէին որ այն կողմերու Թուրք դաւաճապետաց քսակը մտնելով՝ մինչ ի կ'Պօլիս չէր հասներ:

վրայ երթալով՝ ձէվտէթ Էֆէնտիի հետ, նոյն տեղւոյն բնակիչքը հնազանդեցուց տէրութեան, և նոյն գաւառները բարեկարգելէ, հարկ եղած պաշտօնատարքը գնելէ, և այրեալ Գիւղերն ու Աւանները շինել հրամայելէ յետոյ, իւր բանակաւը ի Սիսեկաւ : ձիշդ նոյն միջոցին Աբբաստիայի և Ազիզիէյի կողմէն ուրիշ զօրեղ և բազմաթիւ բանակաւ մը կը յառաջանայր դէպ ի Քօզանեան լերինս՝ Բաշայն Իսմայիլ, որ Մազառա ըսուած դաշտը հասնելով՝ (Հաճընէն վեց ժամ հեռի) հոն բանակեցաւ :

Քօզանեանք, որ սոյն միջոցին յամարանոց գացած էին ի Թօբաքթաշ, մերձ ի Թաբան, երբ լսեցին բանակաց մերձենալն և ստուգեցին իրենց համար լինելը, և վերջապէս երբ ակն յանդիման տեսան իրենց բնաջինջ բարձումը, Քօզանեանք որք իրենց համանուն լերինքը՝ իրր արդար ստացուած իրենց մէջ բաժնած էին, անհուն շիտթութեան մէջ ընկան, և ժողով կազմելով իրենց ամարանոցը հրաւիրեցին իրենց իշխանութեան ներքև ելող քեհեայքը, իշխաններն ու աւագանին, որոց հետ նաև զՎեր. Պետրոս



Արքեպիսկոպոս Հաճընոյ և զՆիկողոս (\*)  
Եպիսկոպոս Նախկին առաջնորդ Բերիոյ և  
Մարաշու, որ նոյն միջոցին ի Հաճըն կը գըրա-  
նուէր, և երգմանցուցին բոլոր կոչեցեալ-  
ները որպէս զի իրենց հաւատարիմ մնան,  
անոնք ալ հաւատարիմ մնալ ու իրենց տեար-  
քը պաշտպանել խոստանալէ յետոյ ցրուե-  
ցան, միաքերնին դնելով թէ ասի իրենց  
վերջին տեսակցութիւնը պիտի լինէր Քօզան-  
եանց հետ :

Ականաւորք և Գեր, առաջնորդն Հաճը-  
նոյ՝ երբ դարձան ի Հաճըն, ջանացին յա-  
րաբերութիւն ունենալ իսմայիլ Բաշայի հետ,  
որ իրենց մօտաւորագոյն էր, ուստի նախ  
զրկեցին մէկ քանի հովիւներ, յետոյ և ու-  
րիշներ մի առ մի Հաճընէն խոյս տալ սկսան  
և բաշայի անձնատուր կը լինէին :

Նոյն միջոցին տեղւոյս առաջնորդը ի Չա-  
թախ գացած էր. (Հաճընէն երկուք ու կէս  
ժամ հեռի,) և հոն տեղ եղած վանուց ար-  
տը հնձել կուտար, երբ զխտակաւ տեսաւ

---

(\*) Այժմու Սոյ ապստամբ չկաթուղիկոսն  
է սա :

ղայն իամայիլ Բաշայն, և զրկեց էքմէքճի պաշի Մարտիրոս անուն անձը, կոչելով զՆորին Գերապատուութիւնը ի բանակն. որ դալով և տեսնելով նորա երթալու հակամէտ չլինելը, ձեռնունայն ետ դարձաւ ի Մաղառա, Երկրորդ օրը մինչ վերստին Պետրոս Արքեպիսկոպոս մշակաց վրայ կը հսկէր, չըջակայից համայն Հայ հովիւներ հրաւիրակ եկան իրեն՝ Բաշային կողմանէ, որոց խոստացաւ Ն. Գերապատուութիւնը՝ գալ ի բանակն, անգամ մը ի Հաճըն դառնալէն յետոյ, և դառնալով ի Հաճըն սկսաւ խորհրդակցիլ ազգային երեւելեաց և Նիկողայոս եպիսկոպոսի հետ :

Նոյն օրը երկու Օսմանեան բանակները հրաման ըրին չըջակայ քաղաքաց՝ որ Քօզանեան լերանց բնակչաց երբէք աղ ցորեան, և այլն. չի տրուի, որով սովը սկսաւ Հաճընոյ մէջ, նաև ճանապարհաց վրայ պահապաններ դրուելով՝ հաղորդակցութիւնք արգիլուեցան : Հաճընցի ազգայինք և Գերառաջնորդը իրենց վիճակը ծանուցին Քօզանեանց, և դարման խնդրեցին իրենցմէ ընդհանուր սովոյն համար : Հաճի Պէկ Քօ-

զանեան եկաւ և սկսաւ յորդորել զիրենք որ հաւատարիմ մնան իրենց, (Քօզանեանց) և չի հպատակին Օսմանեանց, նաև բազմիցս, ժողով գումարեց և քաղցր խօսքերով զանոնք առ ինքն կորզել ջանաց, բայց անոնք պատասխանեցին թէ « Այժմ հնձոց ժամանակ է, պարտիմք բանակին անձնատուր լինել մեր հունձը քաղելու համար (\*) իսկ եթէ քաղաքէն չելլեմք ու լքանեմք մեր արտերը, վերջը վիճակնիս ո՞ւր պիտի երթայ» : Այս խօսքերուս վրայ Հաճի Պէկ խոր մտածութեան մէջ ընկաւ, ժողովը, ցրուեցաւ և Գեր. Առաջնորդը Պաղպուտարեան անուն հաճընցոյ մը տունը դնաց՝ առանձին՝ ազգայնոց հետ խորհրդակցելու համար : Անկարելի է նկարագրել Հաճընոյ հասարակութեան նոյն օրերու վիճակը. ամենքն ալ ահի սրտի, իրենց տան մէջ քաշուած, անստոյգ իրենց ապագային վրայ, մեծ երկիւղի մէջ էին և յանհնարինս կը նեղէին սովէն :

Մինչդեռ Սրբազանը Պաղպուտարեանի

---

(\*) Պէտք է գիտնալ որ Հաճընցոց արտերը առ նուազն երկու երեք ժամ հեռի են քաղաքէն :

առունն էր, հոն եկան կիւրեղ Էվիխանեան  
Հայրապետ Շըխըրաւմեան և Մանուկ Թուր-  
Պարգիսեան աղայք, և աւետեցին թէ Քո-  
զանեան Հաճի Պէկ իւր դիտաւորութիւնը  
փոխած էր, և անձնատուր պիտի լինէր :  
Երկրորդ օրը առաւօտուն Միւֆթին և ակա-  
նաւորք Թըքաց, որոց հետ նաև շատ երե-  
ւելի ազգայինք վանքը եկան առ Ս. Առաջ-  
նորդն, և հոն խորհուրդ ըրին երթալ Իս-  
մայիլ Բաշայի անձնատուր ըլլալու, նոյնպէս  
եկաւ Քոզանեան Հաճի Պէկ, և ճամբայ  
ելան 1863 ին, Յուլիսի 10 ին :

Բաշայն Իսմայիլ մեծ պատուով ընդունեց  
զանոնք, և հարկաւոր ու պիտանի խրատ-  
ներով համոզեց զիրենք՝ Օսմանեան տէրու-  
թեան հնազանդելու, և շատ խօսքերէ յե-  
տոյ զանոնք ի Հաճըն՝ իրենց տեղը վերա-  
դարձուց՝ ըսելով, « Այլ ևս դուք մեր հը-  
պատակներն էք, եթէ Քոզանեանք ձեզ չա-  
րիք մը ու նիւթական վրաս մը ընեն և մենք  
չի կարենամք օգնութեան հասնիլ, յայն-  
ժամ տէրութեան դանձէն՝ միոյն փոխարէն  
տասն վճարել պարտքերնիս է, » Իարձան  
անոնք ի Հաճըն, և իւրաքանչիւր ոք իւր

գործին գնաց, սովը անհետացաւ, պահապանք վերցուեցան, ճանապարհք դիւրացան, արգելք ջնջուեցան, և ամէն մարդիւր ազատութիւնը գտաւ :

Նոյն միջոցներուն լուր մը ելաւ թէ Քօզանեանք կը պատրաստուէին այրել զՀաճըն, ասուելի ազգեցութիւն մը ըրաւ այս լուրը հասարակութեան վրայ, նոյն գիշեր մինչև առաւօտ ամէն տունէ ողբեր, աղաղակներ ու շփոթ ձայներ կը լսուէին, ոմանք իրենց կարասին գետնափոր տեղեր կը պահէին, և ոմանք իբարու տուն խոյս կուտային՝ հրդեհէն (երևակայեալ) ազատելու համար : Սոցա լուրը երբ առաւ Իսմայիլ Բաշայն, հարիւրապետ մի զրկեց, որ առաջին անգամն ըլլալով պաշտօնապէս մտաւ ի Հաճըն, որով այլ ևս քաղաքը օսմանցւոյ ձեռքը անցած համարուեցաւ. սոյն հարիւրապետս քաջալերեց, սիրտ տուաւ հասարակութեան, և շարժմը կենալէ հետոյ դարձաւ ի բանակն, ուրկեց յետոյ եկաւ Սպտուղաս անուն հազարապետ մի, և օթեանեցաւ Սւազ Պոյաճեան Յարութիւն անուն Հաճընցւոյ մը տունը, և շատ

խօսքերով համոզելով օսմանցւոց հնազանդեցուց Հաճընոյ շրջակայից թուրք լեռնաբնակըրը : (Փարսախ) Նոյն օրեր Հաճի պէկ Քօզանեան որ թէֆիք Մէհմէտ միւֆթիի հետ Սիւ գացած էր՝ առ Տէվրիշ Բաշայ , դարձաւ ի Հաճըն՝ նոյն Բաշայէն՝ Հաճընոյ քայմաքամու թեան պաշտօնն առնելով , և միանալով Ապտուլլահ հազարապետի հետ , ըսկատ սակաւ առ սակաւ կարգին դնել Հաճընոյ քաղաքական գործերը . և մէկ կողմէ ալ դեռ ինքնիշխան մնացած գիւղերը մի առ մի կը հպատակեցնէին իրենց :

Սոյն միջոցին Իսմայիլ Բաշայի բանակը Մաղառայէն ելլելով եկաւ իջաւ ի Ռումլու , մերձ ի Հաճըն , և երբ տեղւոյս առաջնորդը նոյա աեսութեան գնաց . Բաշայն խրատեց զինքը որ մէկ քանի աղգայնոց ընկերակցութեամբ երթայ ի Սիւ , ի մեծ բանակն Տէվրիշ Բաշայի : Ժողովեցան մէկ քանիներ ու պատրաստուեցան ճամբայ ելլելու , սակայն որովհետև ուղիղ ճանապարհէն այսինքն Քիրազի և Թարանի կողմէն երթալը վտանգաւոր էր , վասնզի Քօզանեանք կը պահէին այն կողմերը . ուստի խտորնակի ճամբ

բայ մը բռնելով անհուն նեղութեամբ և անպատմելի տառապանօք ու երկիւղիւ հասան ի Սիս, ( 1865, Սեպտեմբեր 8, ) ուր Տէվրիշ Բաշայ զիրենք գիմաւորելով մեծ պատւով ընդունեց. և տեսակցելէ հետոյ՝ հրաման տուաւ իրենց՝ վանքը երթալ ու հանգչելու, ուր նոյնպէս սիրով ընդունուեցան Վեհափառ Կիրակոս Բ. Ս. Կաթողիկոսէն. վեց օր մնացին հոն, և ամեն օր կը տեսակցէին Բաշայի և իւր երեւելի պաշտօնատարաց հետ: Նոյն միջոցին Քօղանեան Ահմէտ աղայն, որդի Էօմէր աղայի, տիրապետին Պէլէն-գիւղի, մերձ ի Հաճըն և թողն Սալիպէկի, եկաւ ու անձնատուր եղաւ տէրիշ Բաշայի, որոյ համար մեծ հանգէս և ցրնծութիւն եղաւ բանակին մէջ, ուրկից յետոյ Գեր. առաջնորդն Հաճընոյ և իրեն հետ ելլողները դարձան ի Հաճըն, և իմանալով իմայիլ Բաշային յՕսպրուխ բանակիլը, ( Հաճընէն մէկ ժամ հեռի, ) շնորհաւորութեան և խնդակցութեան դային իրեն, և յետոյ վերստին ի Հաճըն եկան, որոց հետ եկաւ նաև Ալի Պէկ անուն թուրք պաշտօնատար մը՝ Հաճընոյ վիճակագիրը ընելու համար. իսկ

29-03-082  
(151591)



Բաշայն իսմայիլ իւր բանակովը ի Վահկայ դնաց, ուր եկաւ նաև Տէվրիշ Բաշան քանի մի օրէ յետոյ, և հոն տեսակցեցան այս երկու ազատարարքն Հաճընոյ : Տէվրիշ Բաշայն իւր հետ Սիսէն կը բերէր նաև զԵՌՍՈՒՓ աղա Քօզանեան, զկառավարիչն Հաճընոյ զոր ձեռք անցուցած էր Աւագ-Պոյաճեան Յարութիւնի և Ապտուլահ հազարապետի միջոցաւ :

Նոյն միջոցին <sup>Կէր</sup> անուն հիւանդութիւնը երևան ելաւ Թուրք բանակաց մէջ, որ Հաճընցւոյ ալ հաղորդուելով՝ շատ մարդ ջարդեց :

Երկու Բաշաները երկար խորհրդակցեցան ի Վահկայ, ամենայն կերպով բարեկարգեցին զՀաճըն, և կանոնք ու օրէնք Օսմանեան տէրութեան սկսան գործադրուիլ հոն : Յետոյ Քօզանեանց յրումին ձեռնարկելով՝ նախ Քօզանեան ԵՌՍՈՒՓի ընտանիքը ի Սեբաստիա զրկեցին, նոյնպէս միւս Քօզանեաններէն զոմանս ի Կեսարիա և զոմանս ի Սեբաստիա զրկեցին : Իսկ Տէվրիշ Բաշա տեսնելով քօլէրայի սաստկանալը, կարևոր գործերը իսմայիլ Բաշայի յանձնեց, և դար-



ձաւ ի Սիւ՝ անկից ալ ի Կ. Պօլիս երթալու համար . և ի Սիս մտած օրը վեհապառ Կիրակոս Կաթողիկոսը , որ քօլէրայէ բռնուած էր , փոխեցաւ առ Աստուած , որոյ հանդիսաւոր թաղումը հրամայելով՝ զինուորական նուագածուաց խումբ մ'ալ զրկեց Բաշայն ի պատիւ առաքելաշնորհ հանդուցելոյն :

Իսմայիլ Բաշայն մէկ երկու օր ի վահկայ կենալէ յետոյ զԵՌԱՍՈՒՓ Քօզանեան կը յանձնէ հազարապետ Օսման էֆէնտիի՝ ի Սեբաստիա տարուելու համար՝ որոյ ընկեր կուտայ նաև քօան զինուոր , և ինքը կուգայ կը բանակի ի Քէօթիւն : ԵՌԱՍՈՒՓ Քօզանեան իւր պահապաններով երբ կը հասնի ի Բանլըք , սուտ հիւանդութիւն ձեւացընելով կուղէ նոյն գիշեր հոն մնալ . որոյ կ'անսան իւր ընկերքը : Նոյն գիշեր համայն Բանլըքցիք և շրջակայ գիւղացիք (թուրք) կը հաւաքուին և բռնի առնելով զԵՌԱՍՈՒՓ իւր պահապաններու ձեռքէն , կը քաշուին լերանց մէջ , և վերստին կը պարզեն անկախութեան գրօշը :

Նոյն օրերը ի Հաճըն հասան Հիւանիւ բաշայն որ բոլոր Քօզանեան լերանց Բայմար-

քամ կարգուելով՝ կուգար զՀաճըն բարեկարգելու, և Կ. Պօլսեցի Գեր. Սրիստակէս Եպիսկոպոսը, որ Սոյ Կաթուղիկոսական վիճակաց փոխանորդ կարգուած էր :

Գամբ պատմութեան : Երբ Քօզանեան Եռսուֆի փախուստը իմացուեցաւ, Իսմայիլ բաշա իսկոյն հրաժարեցոյց զՀաճի Պէկ Քօզանեան որ խիստ մեծ գիւրութեամբ և ըստ հաւանական կարծեաց՝ կրնար միանալ իւր ազգական ապստամբի հետ, և նորա յաջորդ կարգեց զՍալի էֆէնտիզատէ Հիւսէյին էֆէնտի, ու Եկեղեցեաց կոչնակները զարնուելով՝ տասն ու հինգ տարեկանէ վեր եղող Հաճընցիք զինուորեցան և գնացին փախստական ապստամբը զարնելու. միւս կողմէն Բանլըքի Հիւսէյին-Պէլէնի, և միւս ապստամբ գիւղերու վրայ Հայոց հրամանատարութեամբ գնդեր զրկուելով այրուեցան՝ ի պատիժ իրենց ապստամբութեան :

Եռսուֆ Քօզանեան իւր մէկ քանի ընկերօք գիւղէ գիւղ թափառելով կը դրդուէր և միանգամայն կը հալածուէր Օսմանեան գնդերէն, վերջապէս լուր կը ղրկէ Կիւլէշէն (Վարդազարդ) գիւղը և կուղէ նոյն

տեղացւոց հետ խորհրդակցել, անոնք ալ  
գիւղէն դուրս պարապ տուն մը կորոչեն,  
և գիշերը հոն կուգայ Եուսուֆ, սակայն  
հազիւ ներս կը մտնէ, հոն եղողներէն մէկ  
քանին իր վրայ յարձակելով՝ ոտքերն ու  
ձեռքերը կը կապեն, և թէպէտ իւր հաւա-  
տարիմքը իրենց տէրը ազատել կը ջանան,  
ոակայն չեն յաջողիր և խոյս կուտան, ուս-  
տի միւսները կառնուն զԵուսուֆ և գիշե-  
րանց ճանբայ ելլելով կը բերեն զայն ի կէօկ-  
սու, և Քիւրտ մը՝ որ նորա հաւատարիմը  
կը ձեւանար, կը փութայ ի Հաճըն և Հիւս-  
նիւ Բաշայի կաւետէ Եուսուֆի բռնուիլը:  
Էքմէքճի Մարտիրոս անուն Հաճընցին  
իմանալով Քօղանեանի գալուստը կը գի-  
մաւորէ զայն և իւր ձիուն վրայ հեծցնելով  
ինքը ուրիշ ձի մը կը հեծնայ և կերթայ ի  
Քէօթիւն, առ իսմայիլ բաշա, ուրկից մե-  
ծամեծ պարգևներ կընդունի՝ բերած աւե-  
տիսին համար: Քիչ մը ետքը լուր եկաւ ի  
Հաճըն թէ Եուսուֆ կուգայ, նոյն միջոցին  
Գեր. Պետրոս և Արիստակէս եպիսկոպոսուն-  
քըն Հիւսնիւ Բաշայի քով ըլլալով՝ հոն մնա-  
ցին մինչև եկաւ Քօղանեան: Նոյն օրը կիւ-

բակէ ըլլալով բոլոր Հաճընցիք ի տես ելան  
անոր, սակայն աւանդ, ուր էր այդ իշխա-  
նապետին նախկին վառքն ու շուքը, անցած  
էր այն ժամանակը յորում խորոխտ երիվա-  
րաց վրայ աշտանակած, անթիւ սպասաւոր-  
ներու ընկերակցութեամբն կը ճեմէր Հա-  
ճընոյ հրապարակին մէջ, այժմ ամօթալի,  
պարտեալ և ստորնացեալ, դողդղալով կը  
յառաջանայր. վերջապէս եկան առ Հիւսնիւ  
Բաշա, և նախ Սլի պէյ անուն պաշտօնա-  
տարը ողջունեց զնա, որոյ Բաշան իւր շնոր-  
հակալութիւնը մատոյց՝ Քօղանեանի բռնուե-  
լուն աշխատելուն համար, յետոյ մտաւ Մի-  
րալայ Մէհմէտ Պէկ և ամենէն ետքը Եու-  
սուֆ Քօղանեան, և երբ մերձեցաւ զԲաշայն  
ողջունելու, Բաշայն արգիլեց զայն ըսելով.  
«Գնա՛, կորսուէ՛, այր վատ և անղգամ, ապս-  
տամբ տէրութեան և թշնամի մարգարէին, »  
խեղճը լռիկ և շփոթեալ մնաց սենեկին մէջ  
սեղ. հոն ներկայ եղողներէն մին խնդրեց  
բաշայէն որ հրաման տայ նստելու, զի հի-  
ւանդ էր, զոր շնորհեց Բաշայն և Եուսուֆ  
նստաւ՝ յետոյ ըսաւ Բաշայն Սլի Պէկին,  
Եուսուֆի որդւոյն, որ նոյնպէս հոն էր.

«Գուհօրմէդ աւելի հաւատարիմ եղար տէրութեան, ուստի հօրմէդ վեր բազմէ» որոյ անսաց մանուկը, յետոյ վերստին խօսքը դարձնելով ըսաւ Բաշայն Եռուսուֆի. «Գու պատճառաւ թէ տէրութիւնը և թէ երկրացիք ահագին փասաներ կրեցին, չգիտէիր որ Օսմանեան Տէրութիւնը ամենակարող է, և կրնայ ամենայն դիւրիւ թեամբ ջնջել քեզ նման ապստամբները» Եռուսուֆ մեղմեկ պատասխանեց, «Վսեմափայլ Տէր, ես յանցանք չունիմ, նոյն գիւղացիքն էին որ զիս զինուորաց ձեռքէն յափշտակեցին և բռնի տարին իրենց հետ:» Գեր. Պետրոս Եպիսկոպոս խօսքը առնելով ըսաւ Բաշային, «Տէր, այս անձը յանցանք չունի, առանց կամակից լինելու բռնի երթալ ստիպուեր է նոյն գեղացւոց հետ.» Քիչ մը ժամանակ ալ տեսակցելէ յետոյ երկու Գեր. Եպիսկոպոսունք իրենց հրաժարական ողջոյնը Բաշայի մատուցանելով վանքը վերադարձան, իսկ զինուորք կառնուն զԵռուսուֆ Քօղանեան, և ամենայն նախատանօք ու ծաղրական փողահարութեամբք կը տանին ի Քէօթիւն, իսմայիլ Բաշայի բանակը, ուր երկու երեք օր մնալէ

յետոյ գիշերանց կը տանին ի Քէօթիւն-Պէ-լէն և հոն կ'սպաննեն, և առանց թաղման հանդէս կատարելու՝ փոսի մը մէջ կը նետեն, և վրան քարեր կը տապալեն՝ նախատանաց համար. իսկ իւր որդին Սլի Պէկը ի Սեբաստիա իւր մօրը ու ընտանեացը կը զրկեն, և անկից բաղմաթիւ պահապաններով բոլոր Քօղանեանները կը զրկեն ի Կ. Պօլիս, յորոց ոմանք հոն կը մնան, և ոմանք կերթան ի Ռուսէլի, ի Սիլիստրէ, և այլն, և այլն, Գամբ Եուսուֆի պատմութեան: Սորա մարմինը չորս ամիսի չափ վերոյիշեալ փոսին մէջ մնալէ յետոյ Հիւսնիւ Բաշայի հրամանաւ կը հանեն զայն և ի Քէօթիւն՝ մզկիթին քով կը թաղեն՝ յուղարկաւորութեան հանդէսն ալ կատարելով:

Եուսուֆի սպանմանէն յետոյ իամայիլ Բաշայն եկաւ բանակեցաւ ի Չաթախ, մերձ ի Հաճըն, և Գեր. Պետրոս Եպիսկոպոս գնաց զինքը զխմաւորելու, և քիչ մը տեսակցելէ յետոյ, երբ ի Հաճըն դառնալու հրաման ուզեց, Բաշայն խնդրեց որ ժամ մը սպասէ, «Վասն զի, ըսաւ, մեծ իշխան մը պիտի գայ, և պէտք է որ զայն զխմաւորեմք»,

և մինչ Գեր. Եպիսկոպոսը ի տարակուսի էր թէ ո՞ր իշխանին համար կը խօսէր, իշխան կոչեցեալը եկաւ, ասի զեռ սուֆ ֆօզանեան զինուորաց ձեռքէն բռնի յափշտակող գիւղացւոց մին էր, Էմպիյէ անուն : Երբ բանակին մերձեցաւ, խումբ մը նուագածուք դիմաւորեցին զայն, և ձիու մը վրայ խտտորնակի հեծցնելով՝ անասնոյն պոչը իւր ձեռքը տուին, և այսպէս յաղթանակաւ բերին զինքը Բաշային և Գեր. Եպիսկոպոսին առջև. հոն շատ նախատական խօսքերէ յետոյ զինքը ձիէն վար ձգեցին և կոչելով իւր անդրանիկ որդին, որ բանակին մէջ բանտարկեալ էր, հարցուցին իրեն թէ « Հայրդ կոպաննե՞ս » « այո՛, կոպաննեմ » , պատասխանեց և Չաթախի մէջ, Կէտիկ ըսուած կամուրջին վրայ տարաւ հրացանեց զայն :

Նոյն օրեր Հաճընոյ վիճակագիրը լինցած ըլլալով կառավարութիւնը սկսաւ Պեթեւէյէ անուն տուրքը պահանջել, և բազմաթիւ Հաճընցիք աղերսեցին թէ « այս տարի շատ նեղութիւն ու վրաս կրեցինք, և ձեզ հետ ալ հաւատարմութեամբ վարուեցանք, ուս-

տի շնորհեցէք մեզ այդ տուրքը միայն ներկայ տարուան համար , : Յայնժամ բարկացաւ Իսմայիլ Բաշայ , և զոմանս ծեծելով ու զոմանս բանտարկելով սկսաւ պահանջել նոյն տուրքը , այն ատեն Մկրտիչ աղայ Պայրամեան որ նախ Տէվրիչ Բաշայի բանակին կառաջնորդէր , և ուրիշ մէկ քանիներ պատրաստուեցան Տէվրիչ Բաշայի երթալ ու կրկնել իրենց աղերսը : Երբ Իսմայիլ Բաշայն իմացաւ զայս , վճիռ հանեց որ Պայրամեան Մկրտիչ աղայն աքսորուի ի Կէմէրէկ իւր ընտանեօքը , վճռեց նաև որ նորա համախոհներն ալ աքսորուին շղթայակապ իբր խռովարար :

Հաճընոյ Գեր , Առաջնորդը զայս իմանալով փութաց ի բանակն Իսմայիլ Բաշայի և շատ աղերսանօք նորա բարկութիւնը ցածուցանելով խօսք առաւ դասապարտելոց աղապուծեանն համար եթէ մէկմէկ երաշխաւոր տան , դարձաւ ի Հաճըն և երաշխաւորներ գտնելով անոնցմէ ստորագրութիւն առաւ , և երկրորդ օրը գալով տեսաւ որ բանակը ճամբայ ելած ու ոչ ոք մնացած էր - ուստի ձին մտրակելով և մեծ-



ներդութեամբ հասաւ Իսմայիլ Բաշայի , մատոյց երաշխաւորութեան գրերը , և ազատեց ու ի Հաճըն դարձուց շղթայեալները , բաց ի Պայրամեան Մկրտիչ աղայէ :

Բաշայն Իսմայիլ այս ամենէն յետոյ գնաց յէփէրէկ , ուր ձմեռն անցընելէ յետոյ դարձաւ ի Կ . Պօլիս :

Հաճըն երկուք ու կէս տարի Սալի Էֆէնտի զատէ Հիւսէյին Էֆէնտիի Քայմաքամութեան ներքեւ մնալէ յետոյ՝ առանց յայտնի պատճառի՝ Կառավարութիւնը հրաժարեցոյց զինքը , և նորա տեղ զրկեց Քէրքիւթցի Սալի Էֆէնտին , որ մէկ տարիի չափ զՀաճըն խիստ ընտիր կերպով կառավարելէ յետոյ՝ նոյնպէս առանց պատճառի հրաժարեցաւ , և իւր տեղ զրկուեցաւ Պայազլիս զատէ Պէքիր Պէկ , որ մէկ ու կէս տարի պաշտօն վարեց , որոյ բռնութիւններէն Հաճընցիք ձածրանալով բողոք բարձին , և Ազգ . Պատրիարքարանի ձեռքով հրաժարելով նորա յաջորդեց Ղալիպ Պէկ անուն մին :



## Ա Ջ Դ

Սոյն համառօտ պատմութիւնն ազատութեան Հաճընոյ, շարագրեալ և աշխատասիրեալ է Հաճընոյ առաջնորդ Գեր. Պետրոս Արքեպիսկոպոս Տէր Մելքոնեանի ձեռամբ, որ սոյն եղելութեանց ականատես լինելով օր առօր եղածը ի գիր կառնուր.

Զասի ընթերցողաց իմացնելը պարտանձին համարած է

Հրասարակիջն

Մ. Չ. Ս.


# Գ Զ Ա


Երևանի մարտի 1920 թ. հունիսի 15-ին  
Երևանի քաղաքի քաղաքապետի պաշտոնատեղի  
ից հրատարակվող հրահանգի համար 1000  
Հրահանգ  
Ստորագրող՝ Կարապետ Բաղդասարյան  
Մարտի 1920 թ. հունիսի 15-ին

Երևանի քաղաքի քաղաքապետի պաշտոնատեղի

Կ Զ Ա







8/10/18





